**Արձանագրություն N 3**
**№059/GArm/26_5.4_030/06.02.26 ծածկագրով**
**Մրցակցային ընտրության հանձնաժողովի**

ք. Երևան 25 փետրվարի 2026թ.
Ժամը՝ 11:15

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Լալայան
Հանձնաժողովի անդամներ՝ Վ.Մակարյան, Հ.Յումուշաղջյան, Տ.Հայրապետյան, Կ.Մինասյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Հարությունյան

1. Մասնակիցների որակավորման գնահատման նիստ

---

«Դավ-Վահ» ՍՊԸ-ի որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել, ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով պահանջված փաստաթղթերին:

«Մետադոր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված մրցակցային փաթեթում բացակայում են աշխատանքային ռեսուրսների վերաբերյալ համապատասխան փաստաթղթերը (կամ պատճենները): Ընկերության կողմից ներկայացված մասնագիտական փորձառության վերաբերյալ համապատասխան պայմանագիրը պակաս է ներկայացված գնառաջարկի 20%-ից (Հրավերի 2.3.2 կետ): Հանձնաժողովը որոշեց Հրավերի Մաս I, 2 կետի համաձայն (Որակավորման չափանիշներից որևէ մեկին չբավարարելու դեպքում մասնակցի հայտը մերժվում է) մերժել «Մետադոր» ՍՊԸ-ի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4 , դեմ - 0:

Հանձնաժողովը որոշեց գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4 , դեմ - 0:

Հիմք ընդունելով գնահատման թերթիկը հանձնաժողովը որոշեց անմիջապես հաստատել գնահատման արդյունքները.

«Դավ-Վահ» ՍՊԸ – բավարար

«Մետադոր» ՍՊԸ – անբավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4 , դեմ - 0:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից իրականացվող գնումների մասին կարգի համաձայն, հանձնաժողովը որոշեց մրցակցային ընտրության ընտրված մասնակից ճանաչել «Դավ-Վահ» ՍՊԸ–ին, որպես բավարար գնահատված մրցակցային ընտրության հայտ և տնտեսապես շահավետ գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4 , դեմ - 0:

2. Մրցակցային ընտրության արդյունքների մասին

-------------------------------------------------------------------------

1. Հանձնաժողովը որոշեց.

Պատվիրատու՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի , որը գտնվում է ք.Երևան Թբիլիսյան 43 հասցեում և կապալառու «Դավ-Վահ» ՍՊԸ-ի, որը գտնվում է ՀՀ, ք.Երևան, Լենինգրադյան 31/12 հասցեում, միջև կնքել աշխատանքների կատարման պայմանագիր:
Պայմանագրի գինը կազմում է **2063918774** ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4 , դեմ - 0:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4 , դեմ - 0:

| | | |
|---|---|---|
| **Հանձնաժողովի.** | | |
| **Նախագահ՝** | | Ա. Լալայան |
| **Անդամներ՝** | | Վ.Մակարյան |
| | | Հ.Յումուշաղցյան |
| | | Տ.Հայրապետյան |
| | | Կ.Մինասյան |
| **Քարտուղար՝** | | Ա.Հարությունյան |

## №059/GArm/26_5.4_030/06.02.26 ծածկագրով մրցակցային ընտրության հայտի գնահատման թերթիկ 25.02.2026թ.

| | Մասնակցի հայտի գնահատման չափանիշները | Գնահատականը | Մասնակցի հայտի գնահատման արդյունքները* | |
|---|---|---|---|---|
| | | | «Դավ-Վահ» ՍՊԸ | «Մետադոր» ՍՊԸ |
| 1 | Հայտ պարունակող ծրարը կազմելու և ներկայացվելու համապատասխանությունը սահմանված կարգին | Անբավարար Բավարար | Բավարար | Բավարար |
| 2 | Բացված ծրարում հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին | Անբավարար Բավարար | Բավարար | Անբավարար |
| 3 | Առաջարկած գնման առարկայի տեխնիկական հատկանիշների համապատասխանությունը հրավերով սահմանված նվազագույն պահանջներին | Անբավարար Բավարար | Բավարար | Բավարար |
| 4 | Ներկայացրած ֆինանսական ցուցանիշների՝ գնային առաջարկի և ինքնարժեքի հաշվարկման ճշտությունը, հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը ու դրանց, ինչպես նաև ինքնարժեքի հաշվարկման թվաբանական ճշտությունը,առաջարկված գումարը չի գերազանցում նախնական առավելագույն արժեքը | Անբավարար Բավարար | Բավարար | Բավարար |
| 5 | Ունի մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը, մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ. | Անբավարար Բավարար | Բավարար | Անբավարար |
| 6 | Նախորդ ժամանակահատվածում՝ տվյալ տարվա և դրան նախորդող 3 տարիների ընթացքում, կատարված նմանատիպ աշխատանքների ընդհանուր ծավալը՝ | Անբավարար Բավարար | Բավարար | Անբավարար |
| 7 | Ֆինանսական և տեխնիկական միջոցների առկայություն | Անբավարար Բավարար | Բավարար | Բավարար |
| | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ | Անբավարար Բավարար | Բավարար | Անբավարար |

*Չափանիշներից որևէ մեկով «Անբավարար» գնահատականը ստացած լինելու դեպքում Մասնակցի հայտը մերժվում է.

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի. | | |
| Նախագահ՝ | | Ա. Լալայան |
| Անդամներ՝ | | Վ.Մակարյան |
| | | Հ.Յումուշաղջյան |
| | | Տ.Հայրապետյան |
| | | Կ.Մինասյան |